



Ուրախալի է, որ այդ հարցի քննարկմանն արդյունավետորեն ներգրավվել են նաեւ միմյանց հանդեպ բարեկամաբար տրամադրված Հայաստանի եւ Վրաստանի պատրիարքարանները: Ինչ վերաբերում է իմ դիրքորոշմանը, ապա համոզված եմ, որ հեռու չէ այն ժամանակը, երբ համատեղ ջանքերով մենք հստակություն կմտցնենք եկեղեցիների պատկանելության հարցում: Համոզված եմ նաեւ, որ այդ եկեղեցիները կվերադարձվեն իրենց օրինական տերերին:

- ՕՐՈՐՈՇՈՒՄԸ ՕՐՈՐՈՇՈՒՄԸՆԵՐԸ ՕՐՈՒ ՕՐՈՐՈՇՈՒՄԸՆԵՐԸ ՕՐՈՐՈՇՈՒՄԸ ՕՐՈՒ ՕՐՈՐՈՇՈՒՄԸ ՕՐՈՒ ՕՐՈՐՈՇՈՒՄԸ ՕՐՈՐՈՇՈՒՄԸ ՕՐՈՐՈՇՈՒՄԸՆԵՐԸ ՕՐՈՒ ՕՐՈՐՈՇՈՒՄԸ ՕՐՈՐՈՇՈՒՄԸՆԵՐԸ

- Իրավացի էք, նման հայտարարություններ եւ անգամ գործողություններ, իրոք, տեղ են գտել: Թեպետ դրանց դեմ ակտիվորեն հանդես են գալիս վրաց հասարակության մեծամասնությունն ու քաղաքագետները: Իրոք, եղել են դեպքեր, երբ ազգային կամ կրոնական հողի վրա, իմ խորին համոզմամբ, տգետ մարդիկ իրենց թույլ են տվել ոչ կոռեկտ, վիրավորական արտահայտություններ անել: Սակայն հավատացնում եմ, մեր հասարակայնությունը մեծ մասամբ բաղկացած է սթափ մարդկանցից, ովքեր նման դեպքերում կտրուկ եւ խիստ արձագանքում են: Վստահեցնում եմ, որ ատելության լեզվով արված յուրաքանչյուր հայտարարություն իշխանությունների կողմից անպատասխան չի մնա: Պետությունն իր ոչ մի քաղաքացուն սահմանափակումներ չի պարտադրում: Գլխավորն այն է, որ քաղաքացիների գործողություններն ու հայտարարությունները վրացական պետության դեմ ուղղված չլինեն:

ՕՐՈՒՄԸ ՕՐՈՐՈՇՈՒՄԸՆԵՐԸ